չապլաքար վառնել և զօրաւոր փաստերով ջը-րել, զոր օրինակ՝ երրորդ գլխումը գրուածքիս մի գասի համար հարցնում է Պ. Բղնունին. Յէ----- ---ջ վր--յ ը----ց --շ--չէր-նէրէ --նէրը. Բէ Ն----ծ. Լաւ կը լինէր որ հարցնէր ես թէ՝ տաք ջրո՞վ լուաց, թէ սառն ջրով, աղբիւրի՞ ջրով, թէ հո-րի, եւն. եւն.

Ահա՛ քեզ տրամական հարցմունք, սիրելի ըն-թերցող. Զորրորդ գլխից ևս մի քանի անտեղի նկատողութիւններ է անում Պ. Կրիտիկոսն. Հայքն մ-ն-ելէց ---ջ Արմ-ն-յէն էր-ն յ-ջ-րդ Նը-շ-ն-յեց. ոչ թէ Ն-- (Հ-յքն) մ----- և էրէն ---ը յ-ջ-րդ-ց (հեր չէ գրած) Արմ-ն-յ (որդին չէ գը-րած). (եր. 88). ահա՛ քեզ կրիտիկոսական նկա-տողութիւն. Ի՞նչ արժէք ունի, բարեմիտ ըն-թերցող, և հետևեալ խօսքի միջից նկատողու-թիւն դուրս բերելը. «Խ-ր--մ-ն---Բէ--մբ յ----ր-յեց (Աժ-ր-հ-յը) Տէֆր--է («քուր» բառը չէ նը-կատած կարճատես Բղնունին) Տէֆր-ն--հ--ն Բէ-րել ------ և --է-- էր-ն ֆլէ----ր Բ--ֆ--ճէ». (եր. 96). յետոյ գրում է զարմացմամբ Պ. Բըղ-նունին. «Ո--րէ-- Տէֆր-ն---ճէն ր-- էր- ճ--րէնէ-ե---մ էլ-- ժ--մ--յը ընէ--էր Բէ Ն- ֆն---մ է յէն Աժ-ր-հ-յ--». Այո՛ գիտէր, բայց չը գիտէր թէ Աժդահակայ բոլոր կանանց գլխաւոր է դառնա-լու.

Թողումք մեր Պ. Բղնունու միւս անտեղի նկա-տողութիւններըը. որոնց պատասխանելու համար՝ արժանաւոր չեմ համարում ժամավաճառ լի-նել. իսկ Ցուցուածի Հայկական անուանց հա-նելուկների վերայօք երկար բարակ նկատողութի-ւն արած է, որ նմանապէս մի արժողութիւն չունի, զի ես կը ցանկայի որ մեր ազգային դպրոցներումը ամեն մի ուսմանց պարապող մանուկների ա-նուանց վրայ ամփոփեր և նոյն Հայկական ա-նուններըը և իրանց պարապոյ ժամերումը հանե-լուկներ բերանացի իրանց մէջ խօսուէր իբրև մի զբօսանք և հարցնէին իրարի (փոխանակ անվա-յել խօսքերի)․ որով և ազգային հոգւով զար-գանային, և երբեմն նոցա հանելուկների միտքը բացատրեր բարեջան և աշխատէր ուսուցիչն. այ-ժըմ տեսանք թէ ի՞նչ վնաս կը բերէ մանուկ-ների փափուկ գաղափարներին (օգտակարութիւ-նից ի զատ). ուրեմն ի զուր է մեր Պ. Բղնունու նկատողութիւնը և այս Ցուցուածի վերայօք. բայց թէ ինքն չունի ազգային զգացմունք և զըզ-վում է մեր ազգային դիւցազնական անուններից, այն մեզ փոյթ չէ. բայց մենք ցանկանում ենք որ մեր Հայ ազգի հօգևոր և ծխական դպրոցաց աշակերտներ և աշակերտուհիներ ամեն ուսմուն-քից և լեզուագիտութիւնից առաջ սովորեն ի-րանց մայրենի լեզուն, հետևապէս կրօնը և ազ-գութիւնը, որով և համարվին Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցւոյ հարազատ արժանա-ւոր զաւակներ, և խորշեն որ և իցէ պղտոր գա-ղափար ունեցող անձինքներից. ապա հայրաբար կզգուշացնեմ Պ. Բղնունուն, որ նկարիչ Ա-պելլէսի պատկերի քննադատող կօշկակարի նման իւր կօշիկներից բարձր դատողութիւն անելու չը համարձակուի. իսկ եթէ կրկին անգամ կամենայ գրել սոյն գրուածքիս դէմը՝ պատրաստ եմ աւե-լի քան զայս՝ պատասխանել. ուրեմն թող առ այժմ ճանաչէ զիս իբրև իւր անկեղծ բարեկամ.

Մ. Ք. ՓԱՓԱԶԵԱՆՑ։

Ի 14 Մ--ր--է. 1873 --մ

Վ. Ա.է---լէ-։

ՆՈՐԱՊԱՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ.

Ի 22-ն ամսոյս՝ Արժ. Վարդապետք Մամբրէ՝ Առաջնորդ Բագիշոյ, Խորէն՝ Վանահայր Արմաշու, և միաբանք Մայր Աթոռոյս՝ Համբարձում Յարութիւն Ծե-րունի և Լուսարարապետ Երեմիա Պա-լըստեան արժանացան ընդունել Եպիս-կոպոսական բարձր աստիճանը։

Մաղթեմք ի Տեառնէ՝ որպէս զի կա-րող լինին ըստ արժանւոյն կատարել Ե-պիսկոպոսական պաշտօնին փափուկ և միանգամայն ծանր պարտաւորութիւնքը յօգուտ և ի պայծառութիւն Եկեղե-ցւոյ և Ազգի Հայաստանեայց։